

Սույն թվականի հունիսի 2-ին Երևանի Տերյան 62 հասցեում տեղի ունեցավ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, ակադեմիկոս Լև Փիրուզյանի հիշատակին նվիրված հուշատախտակի բացման հանդիսավոր արարողությունը:

Ելույթներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Լևոն Մանվելյանը, ՀՀ ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի տնօրեն Ավետիք Իսահակյանը, Լև Փիրուզյանի կինը՝ Ն. Վավիլովի անվան ընդհանուր գենետիկայի ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, պրոֆեսոր Էլիոնորա Փիրուզյանը, Լև Փիրուզյանի քույրը՝ Ելենա Փիրուզյանը, Լև Փիրուզյանի զարմիկը՝ Եվգենի Սաղաթեյանը:

Ընթերցվեցին Ն. Վավիլովի անվան ընդհանուր գենետիկայի ինստիտուտի տնօրեն Ա. Կուդրյավցևի, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամներ, ՌԳԱ ակադեմիկոս Ա. Բեռլինի, ՌԳԱ թղթակից անդամ Վ. Ազատյանի, պրո-

Երևանում բացվեց ակադեմիկոս Լև Փիրուզյանի հիշատակին նվիրված հուշատախտակ



ֆեսոր Վ. Հարությունովի հեռագրերը: Լև Փիրուզյանը հիմնադրել է քիմիական միացությունների կենսաբա-

նական փորձարկման գիտահետազոտական ինստիտուտը, որը ղեկավարել է 1972-84թթ. ընկած ժամանակա-

հատվածում, միաժամանակ Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտում հիմնել է բժշկական կենսաֆիզիկայի ամբիոնը (1978-84թթ.): 2000թ. նա ստեղծել է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի դեղագիտության ֆիզիկաքիմիական տեսական խնդիրների կենտրոնը:

Լև Փիրուզյանն ավելի քան 400 գիտական աշխատանքների, այդ թվում՝ 3 մենագրության և մի շարք հետազոտությունների հեղինակ է: «Մարդու նյութափոխանակության անձնագիրը՝ դեղագիտության մոր մոտեցման հիմք» (2004 թ.) հիմնարար աշխատությունում նա բարձրացրել է դեղերի ազդեցության անհատականացման հարցը, որը հաշվի է առնում նաև մարդու էթնիկական և անհատական առանձնահատկությունները:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Պապոյանն Օպտիկական ընկերության տնօրենների խորհրդի կողմից ճանաչվել է 2019 թ. «Օպտիկայի պաշտպան»:

Օպտիկական ընկերությունը (OSA) համաշխարհային ճանաչում ունեցող կազմակերպություն է, հիմնադրվել է 1916 թ. որպես Ամերիկայի Օպտիկական ընկերություն: OSA-ի առաքելությունն օպտիկայի և ֆոտոնիկայի ոլորտում գիտելիքների ստացմանը, տարածմանը և կիրառմանը նպաստելն է:

Արամ Պապոյանն այս մրցանակին արժանացել է ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի՝ Եվրոպական հետազոտական տարածք (ERA) ինտեգրմանն ուղղված աշխատանքի համար:

«Այս մրցանակը ճանաչումն է Արամ Պապոյանի ղեկավար դերի և խոշոր ջանքերի՝ ուղղված ՀՀ-ի ինտեգրմանը Եվրոպական հետազոտական տարածք (ERA)», - նշված է OSA-ի պաշտոնական հաղորդագրության մեջ:

ERA-ն գիտական հետազոտությունների ծրագրերի համակարգ է, որը կապում է Եվրամիության գիտական ռեսուրսները՝ կենտրոնանալով բժշկական, բնապահպանական, արդյունաբերական և սոցիալ-տնտեսական հետազոտություններում միջազգային համագործակցության վրա:

Ի ԴԵՊ

Հայ ժողովրդին վիճակված դաժան ճակատագիրը մեզ տվել է ապրելու, լինելության դասեր: Եվ դա ոչ միայն հերոսանալու, կռվելու, մաքառելու, հանուն գոյության անձնագրի մարտի գնալու ունակությունն է, այլ նաև ամենակարևորը, պարտադիրը միական, միասնական լինելու, մեկ բռունցք դառնալու կենսական անհրաժեշտությունը:

Մեծն Եղիշե Չարենցը 1933 թվականին գրեց մի աքրոստիկոս-բանաստեղծություն, որը վերնագրեց Պատգամ: Ովքեր չեն կարդացել կամ չեն հիշում այդ բանաստեղծությունը, ուզում ենք հիշեցնել բանաստեղծության բոլոր տողերի երկ-

ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Պապոյանը OSA-ի տնօրենների խորհրդի կողմից ճանաչվել է 2019 թ. «Օպտիկայի պաշտպան»



ERA/ՀՀ-ի ինտեգրումը քվանտային տեղեկատվական գիտության, ատոմային և նյութական ալիքների ֆիզիկայի, սցինտիլյացիոն նյութերի ուղղություններով ընձեռնում է համագործակցության մեխանիզմներ: Հայ հետազոտողները և երիտասարդ մասնագետներն այժմ հնարավորություն ունեն օգտվելու ERA-ի ֆինանսավորումից, աջակցելու և խթանելու հետազոտություններն այդ ոլորտներում: «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի» Եվրոպական հետազոտա-

կան տարածք ինտեգրվելուն Արամ Պապոյանի ջանքերն առանձնանում են որպես լույսի մասին գիտության առաջընթացի շարունակական ձգտում, ինչը ճանաչվել է «Օպտիկայի պաշտպան» մրցանակով: Արամ Պապոյանի աշխատանքի շնորհիվ հնարավոր կդառնա օպտիկայի և ֆոտոնիկայի հետազոտական բնագավառներում կարևոր համագործակցությունը Եվրոպական միության և Եվրոպական հանձնաժողովի ստեղծած ծրագրերի միջոցով», - ասել է OSA-ի նախագահ Ուրսուլա Գիբսոնը:

OSA-ի «Օպտիկայի պաշտպան» կոչումն ամեն տարի շնորհվում է հանրային այն պաշտոնյային, ով դրսևորում է առաջատարի հատկություններ՝ ուղղված լույսի մասին գիտության առաջընթացի աջակցությանը: Արամ Պապոյանին մրցանակը կշնորհվի 2019 թ. հունիսի 24-27-ին Մյունխենում (Գերմանիա) կայանալիք «Laser World of Photonics» համաժողովի ընթացքում՝ մրցանակաբաշխության հանդիսավոր արարողության ժամանակ:

Արամ Պապոյանը ղեկավարում է ՀՀ-ում 2006 թվականից: ՀՀ ԳԱԱ ՀՀ-ի գործունեության հիմնական ոլորտներն են լազերային ֆիզիկան և նյութագիտութ-

յունը:

Արամ Պապոյանը 2011-2014 թթ. համակարգել է Եվրոպական FP7 ծրագրի «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի ինտեգրումը ERA-ին» նախագիծը: Մինչ այդ նա եղել է հայ-ֆրանսիական առաջին միջազգային ասոցացված լաբորատորիայի համահիմնադիրը և հայաստանյան համակարգողը, որի շրջանակներում հետազոտվել են ճառագայթման և նյութի փոխազդեցության խնդիրները:

Արամ Պապոյանն Օպտիկայի միջազգային հանձնաժողովում (ICO) Օպտիկայի հայկական տարածքային կոմիտեի նախագահն է: 2015 թ. նա արժանացել է «ICO Galileo Galilei Award» պատվավոր մրցանակի՝ ալկալի ատոմների բարձր լուծունակության սպեկտրասկոպիայի ոլորտում կարևոր նվաճումների և Հայաստանում փորձարարական ատոմային ֆիզիկայի առաջնորդման գործում ունեցած արժեքավոր ներդրման համար:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

որող տառերը: Նայե՛ք և կարդացե՛ք: Այն հիրավի պատգամ է այսօրվա համար, մեր ազգի, պետականության լինելության համար. «ՈՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴ, ՔՈ ՄԻԱԿ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ ԶՈ ՀԱՎԱԶԱԿԱՆ ԱՄԲՈՂՁՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է»:

Այս տողերը անչափ կարևոր, կենսական և պարտադիր են այսօր, երբ մահացու վտանգը սպառնում է մեր հայրենիքին, մեր ժողովրդի գոյությանը, մեր վերագտած անկախ պետականությանը: Երկպառակությունը, որ համակել է մեր ժողովրդին, մահացու վտանգ է, անդառնալի, ազգակործան վտանգ:



Հայ գիտության նվիրյալներ

ԼԵՎՈՆ ԱԼԵԿՍԱՆԴՐԻ ՌՈՏԻՆՅԱՆ

(1879.22.5, Թիֆլիս -1964.30.12, Երևան)

Նորաբաց Հայաստանի ժողովրդական (հետագայում Երևանի պետական) համալսարանին անհրաժեշտ էին բարձրորակ մասնագետներ, և ՀՀ կառավարության հրավերով ու սրտի կանչով արտասահմանի առաջատար բուհերում աշխատող բազմաթիվ նվիրյալներ մեկնեցին ամառի թունամյան հասարակական «Ձարկվա՞ծ հայրենիք, Ձրկվա՞ծ հայրենիք» և ամբողջովին տրվեցին ՀՀ-ում գիտության ու կրթության զարգացման և ազգաշինության վեհ գործին։ Այդ հայրենասեր, տաղանդավոր գիտնականների թվում կային նաև քիմիկոսներ, որոնցից էին Ստեփան Պողոսի Ղամբարյանը, Լևոն Ալեքսանդրի Ռոտինյանը և ուրիշներ, ովքեր հիմք դրեցին ՀՀ-ում քիմիական գիտության, կրթության և արդյունաբերության հիմնավորմանն ու զարգացմանը։ Ս. Ղամբարյանի կյանքի և գործունեության մասին մեր հոդվածը լույս է տեսել «Գիտության աշխարհում» համադեսում (2018, դեկտեմբեր)։ Այս հոդվածում մենք կխոսենք քիմիկոս մյուս հսկայի՝ Լ. Ռոտինյանի մասին։ Ընդ որում, նրանց գործունեությունը ծավալվել է ոչ միայն համալսարանում և ՀՀ-ում, այլ նաև ճակատագրի բերումով Խորհրդային Միության այլ վայրերում։

ՀՀ-ում ֆիզիկական, անօրգանական և անալիտիկ քիմիայի բաժինները, ապա ամբիոնները ժողովրդական համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետում (1921-1923 թթ.) և հետագայում այլ բուհերում (1930-ական թվականներին) ստեղծել և ղեկավարել է պրոֆ. Լ. Ռոտինյանը։ 1923 թ. ֆիզիկական քիմիայի բաժնի հիման վրա ՀՀ-ում որպես առանձին ամբիոն կազմավորել է ֆիզիկական քիմիայի ամբիոնը, իսկ մյուս երկու բաժինները մույն թվականին միավորվել են որպես անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոն։ Այդ ամբիոնների առաջին վարիչը եղել է Լ. Ռոտինյանը՝ ֆիզիկական քիմիայինը՝ 1923-1938 թթ., իսկ անօրգանական և անալիտիկ քիմիայի միացյալ ամբիոնինը՝ 1923-1933 թթ., ապա դրանք 1934 թ. առանձնացնելուց հետո պրոֆ. Լ. Ռոտինյանը շարունակել է ղեկավարել առանձին գործող անալիտիկ և ֆիզիկական քիմիայի ամբիոնները մինչև 1938 թիվը, իսկ անալիտիկ քիմիայի ամբիոնը նաև 1942-1946 թթ.։ Համալսարանում (և այլ բուհերում) հիմնական կուրսերը՝ ֆիզիկական, անօրգանական, անալիտիկ քիմիա, նաև տեսական էլեկտրաքիմիան և քիմիական տեխնոլոգիան (պոլիտեխնիկումում) կարդացել է պրոֆ. Լ. Ռոտինյանը։ Հարկ է նշել, որ տաղանդավոր պրոֆեսորը բացարձակորեն տիրապետել է նշված մասնագիտություններին, և զարմանալի չէ, որ քիմիայի այդ ուղղություններով ՀՀ-ում և այլուր մեծ հաջողությամբ աշխատել է և դրանք զարգացրել երկար տարիներ թե՛ տեսական, թե՛ գիտական, թե՛ կիրառական տեսակետներով՝ ընդհուպ մինչև կյանքի վերջը։

Պրոֆ. Լ. Ռոտինյանը իր և Ս. Ղամբարյանի լավագույն սան Հովհաննես Չալքիկյանի հետ համալսարանում կազմակերպել և վերակառուցել են բարձր մակարդակի ֆիզիկական և կոլոիդային քիմիայի ամբիոն բնագիտական (1927-1929 թթ.) և քիմիական (1934 թ.) ֆակուլտետներում։ Այդ ամբիոնի վարիչությունը Լ. Ռոտինյանից հետո վարել է տաղանդավոր քիմիկոս Հ. Չալքիկյանը (1939-1972 թթ.)։ Պրոֆ. Լ. Ռոտինյանը 1930 թվից զուգահեռաբար ուսումնագիտական գործունեություն է ծավալել նաև ՀՀ-ում նորաստեղծ շինարարական և քիմիատեխնոլոգիական ինստիտուտներում, որոնք հետո ներգրավվեցին պոլիտեխնիկական ինստիտուտի կազմում։ Պոլիտեխնիկ ինստիտուտում մույնպես կազմակերպել և ղեկավարել է ֆիզիկական և կոլոիդային քիմիայի, տեսական էլեկտրաքիմիայի և

տեխնոլոգիայի մոր ամբիոններ՝ զուգահեռաբար լինելով դրանց վարիչը (1930-1938 թթ.)։

Դեռևս 1925 թ. պրոֆ. Ռոտինյանը Ադրբեյջանի գյուղատնտեսական ինստիտուտում ստեղծել է անօրգանական և անալիտիկ քիմիայի միացյալ ամբիոն, որի վարիչն է եղել հետագայում Կիրովաբադում (Գանձայում) (1946-1948 թթ.)։ Իր անարդարացի աքսորի ժամանակ Չաուշական Զանրապետության գյուղատնտեսական ինստիտուտում ստեղծել է ընդհանուր և անօրգանական քիմիայի միացյալ ամբիոն, որի վարիչն է եղել 1948-1953 թթ.։

Շատ մեծ են եղել այդ շնորհալի գիտնականի զբաղվածությունը և ներդրումը քիմիայի բոլոր բնագավառներում։ Երբ 1921 թ. նա իր ծննդավայր Թիֆլիսից (Թբիլիսի) հրավերով տեղափոխվել է Երևանի համալսարան, ապա առաջին հերթին 1921-1922 թթ. կազմակերպել է Ալավերդու պղնձածուխական գործարանի լաբորատորիան և ղեկավարել այն։ 1922-1927 թթ. ստեղծել է ու աշխատեցրել Երևանի հողօդկոմատի և ժողտնտխորհի կենտրոնական միացյալ լաբորատորիայի անօրգանական քիմիայի բաժինը՝ որպես վարիչ։ Կիրովականի (Վանաձոր) քիմիական կոմբինատում կազմակերպել է ֆիզիկաքիմիական հետազոտությունների կենտրոնական լաբորատորիա, նաև ղեկավարել (1943-1946 թթ.) զուգահեռաբար։ Պրոֆ. Լ. Ռո-

տինյանը եղել է ԽՍՀՄ ԳԱ Հայկական բաժանմունքի (Արմֆանի) ստեղծողներից և ֆիզքիմիայի գծով վարիչ (1935-1938 թթ.)։ Բնածին տաղանդի տեր այդ գիտնականը դեռևս Սանկտ Պետերբուրգի պոլիտեխնիկական ինստիտուտում դասախոս աշխատելու տարիներին (1903-1917 թթ.) Ռուսաստանում առաջինը կազմակերպել է ֆիզիկական քիմիայի ուսումնական լաբորատորիա և առաջինը (Ֆ. Դրեյերի հետ) գրել (ռուսերեն լեզվով) ֆիզիկական քիմիայի գործնական աշխատանքների ուսումնական ձեռնարկ, որը հետագայում օգտագործվել է նաև Երևանի համալսարանում։

Պրոֆ. Լ. Ռոտինյանը ծնվել է Թիֆլիսում 1879 թ. մայիսի 5-ին բժշկի ընտանիքում։ 1898 թ. ավարտել է Թիֆլիսի 3-րդ գիմնազիան, ապա ընդունվել Սանկտ Պետերբուրգի համալսարանի ֆիզմաթ ֆակուլտետի բնագիտական բաժինը, որն ավարտել է 1903 թ.։ Համալսարանն ավարտելուց հետո նրան աշխատանքի են վերցրել մույն համալսարանի ֆիզիկական և տեսական էլեկտրաքիմիայի ամբիոնում, ապա տեղափոխվել է Սանկտ Պետերբուրգի պոլիտեխնիկական ինստիտուտի քիմիայի և էլեկտրաքիմիայի ամբիոն և աշխատել նշանավոր ակադեմիկոս Վ. Ա. Կիստյակովսկու ղեկավարությամբ։ 1904-1907 թթ. գիտական գործունեությունը եղել է Գերմանիայում, որտեղ դարձել է դոկտոր ֆիզիկական քիմիայի գծով (1906 թ.)։ 1918 թ. հրավիրվել է Թիֆլիսի նորաստեղծ համալսարան՝ որպես քիմիայի պրոֆեսոր, որտեղ աշխատել է մինչև 1921 թ., ապա հրավերով մշտապես տեղափոխվել ՀՀ՝ Հայաստանի նորաստեղծ համալսարան։ 1946 թ. պրոֆ. Լ. Ռոտինյանին ուղարկում են աշխատելու Գանձակի գյուղատնտեսական ինստիտուտ։ Չնայած սա էլ աքսոր էր, սակայն պաշտոնապես 1948 թ. նրան աքսորում են Չուսիս։ Աքսորից ազատվելուց հետո (1953 թ.) պրոֆ. Լ. Ռոտինյանը վերադարձել է Երևան և աշխատել միայն ՀՀ ժողովրդային գիտահետազոտական ինստիտուտում (1953-1960 թթ.)՝ որպես ֆիզիկական քիմիայի բաժնի վարիչ։ Եվ այդ ընթացքում նա միակն է ՀՀ քիմիկոսներից, որ շուրջ 62 տարի հաջորդաբար և զուգահեռաբար եղել է համալսարանի և այլ բուհերի ամբիոնի վարիչ, կատարելով ոչ միայն ուսումնական գործերը, այլ զուգահեռաբար նաև շատ լուրջ գիտական, կիրառական և արդյունաբերական բնույթի բազմաթիվ արդիական աշխատանքներ։ Անհավատալի է մարդու այդպիսի եռանդը, կորովը և աշխատասիրությունը, ինչը փաստացի է նրա արած գործերով, հատկապես ֆիզիկական, անօրգանական, անալիտիկ, տեխնոլոգիական քիմիայի և էլեկտրաքիմիայի բնագավառներում (1921-1960 թթ.)։

Պարզապես հետաքրքիր և ուսանելի են այդ գիտական հսկայի կատարած գիտական աշխատանքները նշված բնագավառներում, որոնք համառոտ ներկայացնում ենք ստորև։

Ֆիզքիմիայի բնագավառում՝ ֆիզիկաքիմիական հետազոտությունների հիման վրա ստացվել են շատ բազմազան, հետաքրքիր և կիրառական արդյունքներ։ Դրանք վերաբերում են քիմիական թերմոդինամիկային, մասնավորապես քիմիական միացությունների և դրանց ելանյութերի կրիտիկական ջերմաստիճանների որոշմանը, մաքուր նյութերի մակերևութային երևույթների ուսումնասիրություններին։ Հայկական ծծմբի ուսումնասիրությունները կարևոր դեր են խաղացել կառուցվածքային մածուցիկության տեսության ստեղծման համար։ Նա առաջինը և մեծ ծշողությամբ որոշել է (Վ. Սուխովսկու հետ) սնդիկի, ալյումինի, ծարիրի հալոգենիդների կրիտիկական ջերմաստի-

ճանները, սնդիկի գոլորշիացման առանձնահատկությունները (մինչև 1000°C)։ Ստեղծել է հեղուկների գոլորշիացման ջերմության որոշման սարք։ Կյանքի վերջին շրջանում (1957-1960 թթ.) նա կատարել է դժվարին և արժեքավոր ֆիզիկաքիմիական գիտահետազոտական մոր աշխատանքներ, ուսումնասիրելով եռադադրիչ հեղուկ համակարգերի լուծելիության հավասարաշերմային (իզոթերմային) տրամագրեր (դիագրամներ)։ Կիրառելով բաշխման օրենքը ստացել է լուծված նյութի կոնցենտրացիաներն ու համասեռության տիրույթներն իրար կապող մաթեմատիկական հավասարումներ։

Անօրգանական քիմիայի բնագավառում պրոֆ. Լ. Ռոտինյանը կատարել է շատ կարևոր և կիրառական բնույթի գիտահետազոտական աշխատանքներ։ Լ. Ռոտինյանը և Ս. Ղամբարյանը ՀՀ-ում առաջին անգամ տեղական հումքի մշակմամբ (1923-1927 թթ.) ստացել են ցեմենտ և կալցիումի կարբիդ (գործարանային եղանակով) Երևանում (գործարանը Երևանում շահագործվեց 1933 թվին) և Կիրովականում (Վանաձոր)։ Պրոֆ. Լ. Ռոտինյանն է իրականացրել Արարատյան դաշտավայրի ճահիճների հողաբարելանումը (մելիորացիան) (1924-1927 թթ.), կատարելով ճահիճների և ճահճահողերի ջրաբանական (հիդրոլոգիական) և հողային ուսումնասիրություններ, որոնց հիման վրա կարողացան մշակելի դարձնել այդ տարածքները, իսկ ամենակարևորը, որ հնարավոր դարձավ երևանամերձ այդ հողային տարածքում կառուցել «Կարբիդի» (1933 թ.) և «Կաուչուկի» գործարանները (1930-1940 թթ.)։

Պրոֆ. Լ. Ռոտինյանը զբաղվել է նաև հայկական (տեղական) հանքային և ոչ հանքային ապարների ուսումնասիրությամբ (1923-1927 թթ.), մշակել է բազալտի հալման և բյուրեղացման գործընթացների օրինաչափությունները ու կառուցել բազալտի հալման մուլտի գործարանը՝ քարե ծուլածոներ ստանալու համար։ Առաջարկել է ապակե մանրաթելերի ստացման անընդհատ եղանակ։ Շատ հետաքրքիր է, որ քիմիայի այդ նվիրյալ հայրորդին, գտնվելով աքսորում՝ Չեքոսլավիայում, ղեկավարել է «Մետաղների արդյունաբերական ստացման տեխնոլոգիական պրոցեսների մշակում և յուրացում» թեմայով աշխատանքը, որի համար 1950 թվին ստացել է Խորհրդային Միության Պետական մրցանակ (արտառոց դեպք)։ Նրա կատարած գիտատեխնիկական և գիտատեխնոլոգիական բոլոր գործերը եղել են անգնահատելի, հայրենամուկ և արդիական։

Անալիտիկ քիմիայի բնագավառում մեծ գիտնական Լ. Ռոտինյանի աշխատանքները մույնպես շատ կիրառական և կարևոր են եղել։ Վերլուծական (անալիտիկ) քիմիայի գծով նրա ղեկավարությամբ կատարված աշխատանքները ՀՀ-ում թելադրված են եղել տեղական հանքանյութերի քիմիական բաղադրության անալիզներն իրականացնելու ամերիկացիությանը։ Նրա կողմից առաջինը համալսարանում կազմակերպվեց Անօրգանական և Անալիտիկ քիմիայի ամբիոն, և պրոֆեսորի կողմից ղեկավարվող ՀՀ ժողտնտխորհի կենտրոնական քիմիական լաբորատորիայում (1923-1938 թթ.) կատարվել են անալիզները, յուրացնելով համապատասխան քիմիական անալիզների հայտնի եղանակները։ Միաժամանակ համալսարանում ներդրվել են անալիզի մոր էլեկտրաքիմիական եղանակներ, ինչպես նաև ժամանակակից այլ եղանակներ, և անալիտիկ քիմիայի զարգացումը այդպես շարունակվել է պրոֆ. Լ. Ռոտինյանի սան Վերգինե Թառայանի կողմից հետագայում։

Ամենաբարձր մակարդակով և խորությամբ ու կիրառելիությամբ պրոֆ. Լ. Ռոտինյանի կատարած հսկայածավալ աշխատանքներն անտեսանելի չեն մնացել իսկական և անաչառ գիտնականների կողմից։ Մինչև նրա աքսորվելը՝ 1948 թ., ԽՍՀՄ ԳԱ ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի մասնագիտական խորհուրդը, հաշվի առնելով պրոֆ. Լ. Ռոտինյանի կողմից տարիների ընթացքում կատարված աշխատանքների բարձրակարգ գիտական մակարդակը, նրան երկրորդ անգամ շնորհել է քիմիական գիտությունների դոկտորի գիտական աստիճան առանց պաշտպանության (հազվադեպ դեպք)։ Սակայն դոկտորի դիպլոմը նա ստացավ աքսորից հետո (1955 թ.)։

Անգնահատելի է հանճարեղության հասնող հայ այդ երկու խոշոր քիմիկոս գիտնականների՝ պրոֆ. Ստեփան Ղամբարյանի և պրոֆ. Լևոն Ռոտինյանի գործունեությունը ՀՀ-ում քիմիայի ստեղծման և զարգացման գործում, թե՛ կրթության, թե՛ գիտության, թե՛ արդյունաբերության բնագավառներում։ Նրանք կատարել են համաշխարհային մակարդակի աշխատանքներ։ Սակայն շատ ցավալի է, որ նրանք ըստ արժանվույն չգնահատվեցին, կոչումներ, պարգևներ չստացան, այլ ընդհակառակը՝ անհիմն դատապարտվեցին ու աքսորվեցին Հայրենիքից... Այնինչ նրանք քիմիայի այն ժամանակվա բնագավառներում միջազգային մակարդակ են ունեցել և գիտական աշխարհում մեծ ճանաչում։ Քիմիայի ուսումնագիտական և արդյունաբերական ուղղություններով նրանց կատարած աշխատանքները մույնիսկ մեր ժամանակներում հրատապ են և կիրառելի։ 2019 թիվը նրանց ծննդյան 140-ամյակն է, իսկ Ռոտինյանի մահվան՝ 55 տարելիցը։ Նրանք արժանահիշատակ գիտնականներ են եղել և նրանցով կարելի է միայն հպարտանալ։

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր



Իմ սերնդի մարդիկ անպայման կհիշեն նրան, նրա բամբ ձայնը, նրա նվիրումը հայ երգին ու ազգագրությանը. նա պարզապես այրվեց ու լույս տալով հեռացավ աշխարհից:

Այսօր նրա անունով է կոչվում իր հիմնադրած «Մարաթուկ» ազգագրական երգի-պարի անսամբլը, որը մասնակցում է աշխարհի տարբեր երկրներում կազմակերպվող ազգագրական երգի փառատոներին ու մեծ ավարով վերադառնում հայրենիք՝ ամեն անգամ փառավորելով նրա հիշատակը: «Մարաթուկի» հիմնադրումը խորհրդային սահմանափակումների պայմաններում կրկնակի սխրանք էր, նախ, որ Սասնո և Տարոնի ազգագրական երգն ու պարը դուրս եկան մեծ բեմ, ապա ինքը՝ Մարոն, դարձավ այդ մշակույթի ջատագովներից մեկն ու ամեն ինչ արեց՝ հաջողության հասնելու համար: Ես նրա կատարումներին ծանոթ էի վաղուց, նաև այն բանի շնորհիվ, որ սասունցի հրաշալի ընկերներ ունեի և ունեմ ու մոտիկից ճաշակել էի նրանց նվիրումն իրենց ազգագրական երգերին ու ավանդույթներին, որոնք իրենց լուռնին են հասնում հատկապես քեֆերի ու հարսանիքների ժամանակ: Իսկ Մարոնի հետ անձամբ ծանոթացել եմ Հանրագիտարանի խմբագրությունում 1979-ի ամռանը, երբ աշխատանքի անցա այնտեղ, որտեղ Մկրտիչ Սարգսյանը քիմիական գիտությունների գծով խմբագիրն էր: Խմբագրությունում կատարված որոշ փոփոխությունների պատճառով առանձին մարդիկ ստիպված էին հեռանալ խմբագրությունից: Սակայն ինձ համար շատ անակնկալ էր, որ այդ ժամանակ ինքնակամ հեռացավ նաև Մկրտիչ Սարգսյանը՝ գիտությունների թեկնածու, փորձառու խմբագիրը: Ես փորձեցի նրան հետ պահել այդ որոշումից, բայց ապարդյուն: - Այստեղ ո՞նցեք ավելի բուլշևիկ եմ, քան պետք է,- ասաց: Ես, որ այստեղի կյանքին դեռ ծանոթ չէի, անմիջապես չհասկացա նրան, ավելի ուշ միայն կռահեցի, որ գործող կարգ ու կանոնը նրա սրտով չէին: Նրա նպատակների իրականացման ճանապարհը այլ հարթության մեջ էր:

«Մարաթուկը» հիմնադրվել է 1983-ին՝ այն ժամանակ, երբ խորհրդային կայսրությունը ճաք էր տալիս. լքացման, հոգեվարքի պայմաններում հրապարակայնության և ազատականության առաջին ծիլերն էին ծլում:

- Ինչո՞ւ «Մարաթուկ», - հարցին Մարոնի պատասխանը մեկն էր.- Մարաթուկը սասուն-տարոնցիների մուրազի

սարն է, որի վրա Սբ Աստվածածինն է, ժամ, որին ժողովուրդն արդթում էր. «մըռնիմ քըզի, Սուրբ Մարաթուկ, գորավիզ եղիր մըզի»: Լեռան փեշերին կռվել ու պատսպարվել են անվանի ֆիդայիներից շատերը: Մարոն նրանց հրապարակ հանելու, ժողովրդին ներկայացնելու խնդիր ուներ, որ կատարեց փառքով: Մարոն նաև մի գեղեցիկ պատմություն էր պատմում Մարութա սարի մասին, իբր սասունցի զորանչասեր տղամարդիկ նրան դիմելով ասել են. «Յա, Մարաթուկ, դու անզորանջ իմալ կմնաս հուտա...»: Մարոն «Մարաթուկով» Մարութա սարը տուն բերեց, որ գոնե իր երգով փարատի նրա որբությունը, նրան պահապան կարգեց իրենց բնօրրանից զրկված ու կարոտն աչքերին ապրող հայրենակիցներին: Մարոն մեծ բեմ հանեց Սասուն-Տարոն աշխարհի բազմաթիվ գեղեցիկ երգեր, ժողովրդին հասու դարձրեց մոռացության եզրին հասած մի շարք ռազմահայրենասիրական երգեր, նրանց մոր ոգի ու շունչ հաղորդեց: Նրա համար տոհմիկ երգի պահպանությունը դարձավ ազգային անվտանգության խնդիր. հավաքեց ավելի

պայթեց Մարոնի հանկարծամահության լուրը 1993-ի աշնանը՝ սեպտեմբերի 24-ին: Նրա կյանքի թելը կտրվեց սրտի կաթվածից:

Հայ ժողովուրդը և հատկապես սասունցի-տարոնցիները նման ցնցում ապրել էին միայն Մուշեղ Գալշոյանի ողբերգական մահվան օրերին: Նույն վիշտն էր ու սուգը: Մարոն հեռանում էր կյանքից:

Մկրտիչ Սարգսյանը ծնվել է 1945-ին Արագածոտնի մարզի (նախկին Թալինի շրջան) Կաթնաղբյուր գյուղում՝ այստեղ 1915-ին ծվարած մի գերդաստանում: Նրանց ընտանիքը, հատկապես հայրը՝ Գրիգորը, հայտնի էր իր երաժշտական կարողություններով: Դեռևս 1940-ական թթ.-ին կոմպոզիտոր Սպիրիդոն Մելիքյանը նկատել է Գրիգորի երգն ու ձայնագրել նրա կատարումները: Ընտանիքում երգում էին բոլորը՝ կարևոր չէ՝ ով որքան լավ: Մկրտիչն իր երգչական կարողություններով առանձնանում էր. ձայնը բամբ էր, մի տեսակ երկաթե, բայց կարևորը հո-

Նա «Մարաթուկ»-ով Մարութա սարը տուն բերեց

Սարգսյանների գերդաստանը 1915-ին՝ մեծ գաղթի ժամանակ, Տարոն-Սասուն աշխարհից եկել հաստատվել է Թալինի շրջանի (այժմ՝ Արագածոտնի մարզ) Կաթնաղբյուր գյուղում, որն այն օրերին կրել է Մեհրիբան անունը: Մեհրիբանը, ըստ կարծիքների, հնդկերեն է ծագումով և նշանակում է չքնաղ (չնաշխարհիկ):

քան 300 ազգագրական երգ: Եթե չեմ սխալվում, 1987 թվականն էր, երբ նրա անսամբլը վերադարձել էր Բուլղարիա կատարած հյուրախաղերից, ես ուզեցի իմանալ, թե ինչպես ընդունեց նրան տեղի հայությունը, ասաց՝ հայությունը լավ, բայց որոշ գործիչներ վախեցած էին, մեղք են:

Անսամբլի և անձամբ Մարոնի աստեղային ժամն, իհարկե, դարաբաշխված գարթոնքի օրերն էին՝ 1988-ի մայիսին. Առաջին Հանրապետության հիմնադրման օրվան ընդառաջ՝ անսամբլը հանդես եկավ «Արամ Խաչատրյան» մեծ համերգասրահում: Ինչպես ժողովուրդն է ասում, դահլիճում ասեղ գցելու տեղ չկար, հասարակությունը ցնծում էր ամեն երգից՝ հատկապես ռազմահայրենասիրական երգերից հետո, երբ հայոց փառապանծ ֆիդայիները ոգեկոչվում էին մասնակցելու Ղարաբաղի ազատագրական պայքարին: Քիչ է ասել, թե Մարոն այդ օրը տարերքի մեջ էր, նա բառիս բուն իմաստով 7-րդ երկնքում էր: Նա բեմից աչքով-ուրքով, ձեռքերով աջ ու ձախ ողջունում էր դահլիճում հավաքվածներին: Աշխարհն իրենք էր, Սասուն-Տարոնն էլ հետը:

Չնայած անսամբլի վերելքը շարունակվում էր, բայց ժամանակները արագ փոխվեցին, սկսվեց հայ-ադրբեջանական պատերազմը, և հաճախակի դարձան մեր մահատակ հերոսներին հուղարկավորելու արարողությունները: Մարոնի հետ մեր հանդիպումները տեղի էին ունենում հիմնականում այդ արարողությունների ժամանակ և, բնականաբար, խորհում էինք պատերազմական դեպքերի ու իրադարձությունների շուրջ, խոսում նաև անկախացած Հայաստանի առջև ծառացած հազար ու մի հարցերի մասին: Նա լավատես էր, գիտեր, որ պիտի հաղթենք, մազաչափ անգամ չէր կասկածում: Մեր մահատակների ու շարունակվող զոհերի ճնշող մթնոլորտում իսկական զույժի պես



Գևորգ և Մկրտիչ (Մարո) եղբայրները Գևորգի չորսամյա որդի Արմանի հետ: Ի դեպ, լուսանկարում պատկերված փոքրիկ Արմանն այժմ 33 ոստիկանապետի առաջին տեղակալն է:

գին էր, որ երգը կենդանացնում էր, նրան շունչ ու մարմին հաղորդում: Բոլոր երգող սասունցիների նման Մկրտիչ երգը տարիների ընթացքում հասակ առավ և վերածվեց արտահայտված հայրենաբաղձության. այնպես ամուր կպավ նրան, որ այլևս պոկ չեկավ նրանից ամբողջ կյանքի ընթացքում:

Մարոն այսօր կարող էր մեր կողքին լինել, բայց Տիրոջ գործերն անքննելի են: Այս հոգվածով մեր խոնարհումն ենք բերում այդ նվիրյալ հայրենասերի պայծառ հիշատակին:

Հովհաննես ԱՅՎԱԶՅԱՆ

«Հայկական հանրագիտարան հրատարակչության» գլխավոր խմբագիր-տնօրեն

ԳԻՐՔ ՆՎԻՐՎԱԾ ՏՆՏԵՍԱԳԵՏՆԵՐԻՆ

Լույս է տեսել «Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշները Հայաստանի Հանրապետությունում» գիտաժողովի նյութերն ամփոփող (ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ: Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2019 թ., 352 էջ) գիրքը:

Ժողովածուն նվիրվում է թավշյա հեղափոխության միամյակին (2018-2019 թթ.): Ժողովածուում զետեղված հոդվածները կարող են օգտակար և կիրառական լինել Հայաստանում իրականացվող տնտեսական հեղափոխության գործընթացում: Գիրքը երաշխավորված է հրատարակության ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտու-

տի գիտական խորհրդի որոշմամբ: Ժողովածուի պատասխանատու խմբագիրն է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Հարությունյանը:

Գրքում տեղ են գտել բազմաթիվ հետաքրքրական և բովանդակալից հոդվածներ՝ նվիրված մեր տնտեսության հետազա զարգացման խնդիրներին: Մասնավորապես Ֆինանսական համակարգի կատարելագործման ուղենիշները ՀՀ-ում, Հայաստանը «մոր տնտեսության» ճանապարհին. ռազմարդյունաբերություն, Հայաստանի ներդրումային միջավայրի բարեփոխման հեղափոխական մոդելը, Հայաստանի Հանրապետության հանքարդյունաբերությունը, մտորումներ,

հանգույցներ, զբոսաշրջության զարգացման ուղենիշները և այլն:

Հարկ է նշել, որ այս խնդրին էր նվիրված մայիսի 21-ին ՀՀ ԳԱԱ դահլիճում կայացած գիտաժողովը, որին իր մասնակցությունն էր բերել նաև ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանը, այլ պաշտոնական անձինք: Ն. Փաշինյանը և Ելույթ ունեցողները բարձր գնահատեցին տնտեսագիտական մորարարական մտեցումները մեր երկրում:

- Հասարակության պահանջն ավելին է, քան արձանագրված հաջողությունները: Բարեփոխումների և կենսամակարդակի հեղափոխական ազդեցության ակնկալիքն արդարացի է և օբյեկտիվ,- իր ելույթում նշեց ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի ան-

վան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Վ. Հարությունյանը:

Ի դեպ, Վ. Հարությունյանը մեծ ներդրում ունի գիտաժողովի կազմակերպման և անցկացման գործում: Գրքում ներկայացված նյութերը կարող են ազդակ հանդիսանալ մեր երկրի տնտեսության հետազա զարգացման գործում:

Ստեփան ՊԱՊԻՎՅԱՆ
Հայկական էներգետիկական ակադեմիայի հիմնադիր նախագահ, տեխնիկական գիտությունների թեկնածու

Օսմանյան կայսրության երիտթուրք կառավարության պարագլուխներն Առաջին աշխարհամարտին մասնակցեցին զավթողական նպատակներով և արևմտահայոց սպանող իրագործելու իրենց երբեմնի պանթուրքական և պանիսլամական հրեշավոր ծրագրով: Ուստի զենք փնտրելու և հայ երիտասարդներին թուրքական բանակ զորակոչելու պատրվակով երկրի ողջ տարածքով ծայր առան հայերի ձերբակալություններ, բռնի տեղահանություններ և զանգվածային կոտորածներ:

Ողբերգական այդ օրերին հայ ժողովրդի հոգում վերագաթնեց դարերի խորքից ժառանգաբար արյան հետ եկող «Մահ իմացեալը» ստրուկ կյանքից մախընտրելու և բռնությանը միահամուռ ուժով դիմադրելու հերոսացման իր խիզախ ոգին: Ինքնապաշտպանական գոյամարտեր տեղի ունեցան Յոզղատի Ագդաղում, Շատախում,

Վանեցիները հրավիրում են ընդհանուր ժողով և ընտրում դիմադրողական ինքնապաշտպանական Զինվորական մարմին՝ Արմենակ Եկարյանի, Արամ Մանուկյանի և Հրամտ Գալիկյանի ղեկավարությամբ: Վանում էին նաև ֆիդայիներ Կայծակ Առաքելը, բուլղարացի զինագործ Գրիգորը, նկարիչ Փանոս Թերլեմեզյանը և ուրիշներ: Ընտրվում են նաև Պարենավորման մարմին, Ամրաշեն վաշտ, որտեղ աշխատելու ընդունակ տղամարդիկ սկսում են դիրքեր փորել, իսկ երկաթագործները շտապ պատրաստում են միզակներ՝ զինելով բնակչությանը: Ամրաշեն վաշտը հնարամտությամբ, ստորգետնյա խրամատ փորելով, անցկատ հասնում է մինչև թուրքական զորանոցի հատակը և այն տակից պայթեցնում: Թուրքական զորանոցն իր զորքերով ոչնչացվում է՝ վանեցիներին ազատելով այդ մղձավանջից: Ստեղծվել են նաև

դարձել: Հետևաբար, ժամանակն էր հին հաշիվները մաքրել նաև համարձակ գեթունցիների հետ, որոնք ինչպես անցյալում, այս անգամ ևս կարող էին անձնվեր պայքարի դուրս գալ, բայց դրան խանգարում են Կիլիկիայի կաթողիկոս Սահակ Բ Խաբայանն ու հայ երեսելիները, որոնք, հավատալով թուրքական կառավարության կեղծ խոստումներին, «հնազանդության» կոչ են անում: Այնինչ գեթունցի մայրերն իրենց զավակներին քաջ ու անվախ դաստիարակելու համար իրենց բարբառով երգել են, որը ներկայացնում են կից գրական թարգմանությամբ.

«Որդիս վաղը կդառնա կտրիճ,
Թշնամու դիակը կփռե գետնին,
Արծաթ օղակով հրացանն ուսին
Ինքնամոռաց մա պտիտ կռվի»:

1915 թ. գարնանից սկսվում են Կիլիկիայի հայության

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՑ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԵՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ (1915-1923 թթ.)

ԸՍՏ ԱԿԱՆԱՏԵՍ-ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Վանում, Մուշում, Սասունում, Շապին-Գարահիսարում, այնուհետև նաև Կիլիկիայում՝ Ձեթունում, Ֆրնդըզագում, Մուսա լեռում, Ուրֆայում, ավելի ուշ՝ 1920-1921 թթ., Մարաշում, Այնթապում, Հաճընում և այլուր: Այդ բոլորի մասին մեզ են հաղորդել ակամատես-վերապրողներն իրենց հուշ-վկայություններում:

Յոզղատը, որն ուներ 48 հայկական գյուղ՝ շուրջ 75 հազար հայ բնակչությամբ, դիմադրում է Օսմանյան կայսրության կազմակերպած զորահավաքին, զինահավաքին և բռնազաղթին:

1915 թ. ապրիլին Յոզղատի շրջանում թուրք ոստիկաններն իսլամ այլազան ցեղերի և տգետ ու մոլեռանդ ամբոխի հետ հարձակվում են հայկական Քիլլեր, Բեռի-րենկ, ապա նաև Չաթ, Բուրուն-Ղըշլա, Ելլենջե, Գունգուլու, Թենթիլ և այլ գյուղերի վրա՝ պահանջելով հայ երիտասարդներին զորակոչել թուրքական բանակ և հավաքել բնակչության զենքերը: Յոզղատցիները կտրականապես մերժում են: Սկսվում է երկկողմ հրացանաձգությունը: Թուրքերը տեսնելով, որ անհնար է



կռվողներին օգնության հասնող «Թռուցիկ խումբ», վառողի արտադրություն, փամփուշտարանի արհեստանոց, խնամատար մարմին, Կարմիր խաչի հիվանդանոցներ և այլն:

Վանի ինքնապաշտպանության մեջ իր նշանակալի դերն ունեն Վարժապետանոցի սաների փողային նվագախումբը՝ ֆանֆառը, որն ամբողջ օրը նվագելով շրջում էր փողոցներով ու ոգևորում կռվողներին և ընդհակառակը՝ բացասաբար էր անդրադառնում թուրքերի վրա: Մայիսի 6-ին Վանի բերդի վրա ծածանվում է հայկական դրոշակը:

Վասպուրականի դիմադրողական ինքնապաշտպանության ակնատես Շավարշ Հովհիվյանի վկայությամբ. «Առաջին օրն իսկ Այգեստանը ստացավ ինքնօրեն կառավարութեան մը երեւոյթը, ան իր Զին., Քաղ. և Տնտեսական Վարչութիւններովը անենացայտուն ապացոյցը կ'ուտար տոհմային ծիրքի ու ձեռնհասութեան, կատարելապես ռանկավարական ուղղութեամբ, այսինքն իրաքանջիւր անհատ յօժարական իր բաժինը կը բերեր ինքնապաշտպանութեան փրկարար գործին»:



Հունիսի 29-ին՝ պաշտպանության 27-րդ օրը, թուրքերը ներխուժում են բերդ, սկսում են կացնահարել անպաշտպան ողջ մնացածներին: Պատվախնդիր հայուհիները նետվում են անդոնախոր ծորը, որպեսզի փրկեն հայ կնոջ պատիվը:

Կիլիկիայի արծավաբույն Ձեթունը վաղուց արդեն թուրքական բռնակալության գայլույթի կիզակետն էր

բռնազաղթն ու կոտորածը: Դատարկվում են Մարաշը, Այնթապը, Հաճընը, Ամսիոքը, Իսկենդերունը, Քեսաբը: Մուսալեռցիները տեսնելով, որ հերթը իրենց է հասնելու, հուլիսի 19-ին Մուսա լեռան յոթ գյուղերի գրեթե բոլոր բնակիչները միաբանվելով որոշում են չենթարկվել տեղահանության կորստաբեր հրամանին: Մուսա լեռան հերոսամարտի մասնակից 105-ամյա Մովսես Փանոսյանը (ծնվ. 1885 թ.) իրեն հատուկ երիտասարդական ավյունով է պատմել այդ դեպքերը՝ վերհիշելով մուսալեռցիների երդումը.

«Ես այստեղ եմ ծնվել, այստեղ էլ կմեռնեմ,
Ես չեմ գնա ստրուկի պես թշնամու
Հրամանի տակ չարչարանքով մեռնելու.
Հրացանը ձեռքիս կմեռնեմ այստեղ,
Բայց գաղթական չեմ դառնա»:



40 օր համառ մարտեր են մղվում Եսայի Յաղուբյանի, Պետրոս Դնլաբյանի և վերապատվելի Տիգրան Անդրեասյանի զխավորությամբ: Այդ ընթացքում Քըզըլջա-յի, Քուզըլդազի, Դանլաբլի և Դափլան Դուզախի բարձունքներում չորս կարևոր ճակատամարտ է տեղի ունենում: Ըստ այդմ էլ հյուսվել է ժողովրդական պատմական խրոխտ դյուցազներգությունը.

«...Լեռնի ենք մենք՝ բոլորս ալ քաջ,
Մենք չենք խոնարհվի թշնամու առաջ,
Առյուծի նման կկռվենք քաջ-քաջ,
Ցիր ու ցան կանենք բանակը տաճկաց...»:

Սեպտեմբերի 5-ին Միջերկրական ծովի խորքով անցնող ֆրանսիական «Կիչեն» ռազմամավը նկատում և դանդաղեցնում է ընթացքը: Յոթ օր հետո ֆրանսիական «Ժամնա դ'Արկ» շոգենավը անգլիական ռազմամավերի ուղեկցությամբ մոտենում է Մուսա լեռանը և ավելի քան 4.200 մուսալեռցիների փոխադրում Պորտ Սաիդ, որտեղ նրանք Պողոս Նուբարի հիմնադրած ՀԲԸՄ-ի աջակցությամբ պատսպարվում են բերգենտյա վրանաբաղաբուն:

Հոկտեմբեր ամսին կազմակերպվում է Ուրֆայի հերոսական ինքնապաշտպանությունը՝ Սկրտիչ Յոթնեղբայրյանի և Հարություն Ռաստելեյանի զխավորությամբ: Ոտքի է կանգնում Ուրֆայի ողջ հայությունը: Մասնակցում են նաև արդի, բոլորը մեկ մարդու նման ինքնամոռաց կռվում են 25 օր ու գիշեր անդադար: Հայոց թաղամասերը բաժանվում են վեց մարտական շրջանների, որտեղ տեղաբաշխված էին 800 մարտիկներ: Իրենց բացառիկ քաջությամբ աչքի են ընկել նաև հայ կանայք, այդ թվում՝ հերոսուհի Խանում Քեթեմջյանը: Ուրֆացիները երդվում են. «Մենք պատրաստ ենք մեռնելու զենքը ձեռքներին»:

(Շարունակելի)

Վերջինե ՍՎԱԶԼՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ,
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստի-
տուտի առաջատար գիտաշխատող



նրանց հաղթել, հրկիզում են նշված գյուղերի փայտաշեն տները: Անօթևան մնացած համագյուղացիները ստիպված բարձրանում են մոտակա Ագդաղի անմատչելի լեռը, որտեղ իրենց խիզախությամբ հայտնի դարձած Սամվել Ինճեյանի, Հաջիբեյ Փափագյանի, Աբիսողոմ Առաքելյանի, Ադամի, Գյուլբենկի, Զիլ-Օհանի, Արթինի, թենթիլցի Մանուկի և այլ խմբապետների ղեկավարությամբ կազմակերպում են մարտական ջոկատներ և չորս տարի շարունակ, կիրառելով պարտիզանական պայքարի ձևը, մինչև 1918 թ. զինադադարը խիզախորեն մարտնչում են Ագդաղի բարձունքներում և տարածաշրջանում:

Եթե Ագդաղի բառանյա գոյամարտն իր լայնածավալ ընդգրկումով, բազմաթիվ մարտական խմբերի և ժողովրդական զանգվածների անձնուրաց մասնակցությամբ կենաց ու մահու պայքար էր թուրքական կառավարության զինված զորաբաժինների դեմ, ապա Վանի ինքնապաշտպանական հերոսամարտն իր ռազմավարական կազմակերպվածությամբ առանձնապես օրինակելի դարձրեց խիզախ վանեցիների սխրանքը, որն սկիզբ էր առել Վանի ղեկավար Պր. Իշխանի և թուրքական խորհրդարանի անդամ Արշակ Վռամյանի նկատմամբ Ջևդեթ փաշայի կազմակերպած դաժան հաշվեհարդարով ու շատախցիների զինված ինքնապաշտպանությամբ:

Վան քաղաքը բաժանված էր երկու մասի՝ Այգեստան և Քաղաքամեջ: Այգեստանի Համուդ աղայի թուրքական զորանոցը, որը մինչ այդ դատարկ էր, այդ օրը լցվել էր 130 թուրք զինվորներով և դարձել չարիք հայ կռվողների համար: Բայց վանեցիները միակամ էին և վճռական, նրանք ուխտել էին՝ «Ձեն ի ձեռին կռվելով մեռնել, քան՝ ոչխարներու պես մորթոտվիլ»:

1916 թ. ապրիլի սկզբին ռուս անվանի բանաստեղծ, գրող, հրապարակախոս, թարգմանիչ և հասարակական գործիչ Սերգեյ Գորոդեցկին (1884-1967)՝ իբրև Զամառուսաստանյան քաղաքների միության գործիչ և «Ռուսակոյե սլովո» թերթի թղթակից, գործուղվում է Կովկասյան ռազմաճակատ, ժամանում Թիֆլիս: Ապրիլի 10-ից 12-ն ընկած ժամանակահատվածում Քաղաքների միության բաժանմունքում նշանակում ստանալով Վան՝ նա պատահաբար ծանոթանում է Թումանյանի հետ, որը մեծ չափով կանխորոշում է նրա հետագա գործունեության ուղղվածությունն Արևմտյան Զասաստանում, ապա՝ Անդրկովկասում:

«1916 թվականին էր, - մտաբերում է Ս. Գորոդեցկին. - երրորդ անգամ էի լինում Թիֆլիսում, այս անգամ

Լայնսիրտ, «հոգու դուռը» բաց այդ անկեղծությամբ էլ առաջին իսկ հանդիպումից Թումանյանը նվաճում է Գորոդեցկու սիրտն ու հոգին: Զայ բանաստեղծի օջախից նա հեռանում է «ցցված ու թևավորված» և անմիջական տպավորությամբ գրում ու ապրիլի 14-ին Թումանյանին է տանում նրան նվիրված «Հայաստան» բանաստեղծությունը:

Ինչպես անհայտ կնոջ դեմ, խորհրդավոր ու անբիծ, Քո դեմ կանգնել եմ բախտի սարսուռով մի առանձին,

Եվ վախենում է պոկվել առաջին բառն իմ շուրթից, Եվ աչքերս եմ շվարում թախանձանքով առաջին: Քեզ ճանաչել, հասկանալ ու գրկել եմ ուզում ես, Ուզում եմ, որ իրար դեմ բացվեն դռները ոսկի,

Յովհ. Թումանյանի 150-ամյակի առթիվ

Ս. ԳՈՐՈԴԵՑԿԻ.

«ՁԵՐ ԱՆՈՒՆԸ ԳԱՂԱՓԱՐ Է ...»



Ով Հայաստան, արյունով, կրակով ես տանջում եք,

Ես ուզում եմ սիրել քեզ ու խորհուրդը քո խոսքի: Զետևությունն այն է, որ այդուհետև իր անելիքն ու ասելիքն անբաժան են լինելու Հայաստանից, նրա պատմական ճակատագրի խորհուրդներից, որ խոստովանում է, թե. «... իմ ճամփան պարզ դարձավ ինձ համար»: Եվ, իրավ, Գորոդեցկու հետագա ողջ գործունեությունը դրա վառ վկայությունն է:

... Հայտնի է, որ Յովհ. Թումանյանի և Ս. Գորոդեցկու հարաբերությունները բարեկամական էին, մտերմիկ, նրանց միջև կար հոգևոր կապ: Դա ընկերություն էր՝ լուսավորված ռուս և հայ ժողովուրդների պատմական փորձությունների խոր գիտակցությամբ: Զենց դա էլ կազմում է երկու բանաստեղծների այն տարիների հասարակական ու հրապարակախոսական գործունեության առանցքը, հիմքը և մեծ իմաստ հաղորդում դրան: Այդ տեսակետից ուշագրավ է Յովհ. Թումանյանի «Բաց նամակ Սերգեյ Գորոդեցկուն» հոդվածը: Զայ բանաստեղծն այն գրել է 1918 թ. հունվարի 3-ին Կովկասյան ճակատից ռուսական բանակի հեռանալու առնչությամբ՝ անհանգստացած բախտի քմահաճությին թողնված հայերի դրությամբ: Ս. Գորոդեցկին հունվարի 10-ին հանդես եկավ Թումանյանի «խոր ու հուզիչ հարցերին» տված պատասխան խոսքով: Լայնորեն հայտնի այս նամակներով այդ դժվարին, ծանր օրերին Թումանյանը և Գորոդեցկին հանգստացնում էին հասարակությանն ու ժողովրդին:

Դիմելով Գորոդեցկուն «որպես ռուս բանաստեղծ և ռուս ժողովրդի հոգու մեկնիչ», Յովհ. Թումանյանը ցավով մասնավորապես գրում է. «Ձեր աչքերի առաջ այստեղ Կովկասում տեղի է ունենում չափազանց տարօրինակ երևույթ: ... ռուսական բանակը, որ հաղթականորեն մտել է թշնամու երկրի խորքը և դարձել դրության տերը, սկսում է նահանջել ոչ միայն ռազմադաշտից, այլև լքել նույնիսկ Կովկասը:

Հավատա՞լ արդյոք, որ ռուսներն այդքան հեշտ կարող են թողնել իրենց գրաված վայրերը և Կովկասը:

Հավատա՞լ արդյոք, որ ռուսները միայն ցարերի կամքով էին Կովկաս գալիս և այժմ, երբ այդ կամքը չկա, վերադառնում են տուն:

... Կովկասի և ընդհանրապես Մերձավոր Արևելքի նվաճման ժամանակ ռուս լավագույն մարդիկ այն միտքն էին հայտնում, որ Ռուսաստանը կոչված է այդ երկրներում ստեղծել քաղաքացիական ազատ կյանք, արդար իրավակարգ և լինել կուլտուրայի ու լուսավորության կրողը:

Ի՞նչ եք կարծում, այդ բոլորը միայն դատարկ ֆրազներ էին, և մենք, որ մինչև այժմ հավատում էինք, սխալվե՞լ ենք:

Ռուսաստանն ավելի քան մի հարյուրամյակի ընթացքում միլիարդներով փող է գործադրել և անհամար հերոսական պատերազմներում միլիոնավոր կյանքեր զոհաբերել և ստեղծել լայնածավալ մի պետություն, որ այժմ դարձել է ռուսական մեծ հանրապետություն:

Ի՞նչ եք կարծում՝ ոչ մի կապ չկա՞ այն միլիոնավոր ռուս մարդկանց և այժմյան ռուսների միջև: Եվ մեր օրերի ազատ ռուս մարդիկ, որ դեռևս կանգնած են պատմական եղբայրական շիրիմների վրա, մի՞թե այժմ հրաժարվում են իրենց ժառանգությունից, Արևելքում իրենց գրաված դիրքից և իրենց ազգային մեծ միսիան կատարելուց»:

Ս. Գորոդեցկին իր «Պատասխան Յովհաննես Թումանյանին» խոսքում «անողորմ անկեղծությամբ» ասում

է. «Թանկագին Յովհաննես Թադևոսի: Կարծես թե Մասիսի գագաթից, որտեղ օդը մաքուր է, և երկինքը՝ մուրիկ, հնչեց Ձեր ծայմը դեպի ինձ՝ ռուսական հարթավայր, որը հիմա նման է մեռյալների գետի՝ Ստիքսի հովտին:

Եվ ես ուրախությամբ գրիչ եմ վերցնում Ձեզ պատասխանելու համար: Քանզի ողջ Ռուսաստանը, նրա բոլոր անեծքները, նրա ողջ տառապանքը, ինչպես և բոլոր հույսերը կրում եմ իմ մեջ և ամենօրյա մտորումներով տեսնում ապագան, որը նախագգում եմ որպես ամենապայծառ, ուշի ուշով լսում եմ ներկան և նրանից ելք եմ փնտրում: ... Ձեր նամակը ես ընդունում եմ որպես Հայաստանի և Ռուսաստանի միջև բարեկամության և եղբայրության ակտ՝ ամրապնդված պատերազմի և հեղափոխության արյամբ: Միայն մոտ բարեկամը կարող է նման ճիշտ և խոր հարցադրումներ անել, այնպես որ դրանք ցավ պատճառեն, և միայն մոտ բարեկամին կարելի է այնպես պատասխանել, ինչպես ես եմ պատասխանում՝ անողորմ անկեղծությամբ»:

Այնուհետև պատմական ակնարկ ձգելով ռուսաստանյան իրադարձություններին, դրանում մտավորականության դերին Գորոդեցկին գրում է. «Եվ այն ժամանակ, երբ պատմությունը մեկը մյուսի ետևից «մեծ առաքելություն» էր պատրաստում Ռուսաստանի համար՝ Սերբիայի ազատագրումը, միացյալ Լեհաստանի ստեղծումը, միացյալ Հայաստանի ազատագրումն ու վերաստեղծումը, նեղուցների ազատագրումը, մշակութային աշխատանքը Պարսկաստանում, նույն այդ ժամանակ ավելի ուժեղ ընթացք էր ստանում ստրկության և անօրենության համար ուժեղագույն թույն համարվող անարխիզացման և միլիտիզացման պրոցեսը: ... Եվ, ահա, կատարվեց այն, ինչ տեսնում ենք ... Կովկասյան բանակի... նախիրի պես նահանջելը համառուսական գործին գիտակցաբար դավաճանություն չէր, ոչ էլ հայկական գործին մտածված դավաճանություն, այլ միայն մութ, չգիտակցված հնազանդություն ներկայումս ողջ Ռուսաստանին առաջ մղող տարերային ուժերին: ... Կովկասում ռուսական գործը միայն կարճաժամկետ ճգնաժամ է ապրում»: Ռուս հրապարակախոսի եզրահանգումը հետևյալն է. «Կովկասը չի կարող ապրել առանց Ռուսաստանի, ինչպես և Ռուսաստանն առանց Կովկասի»:

Յովհ. Թումանյանի նամակը և Ս. Գորոդեցկու պատասխանը լայն արձագանք գտան հայ, ռուս և վրաց մտավորականության շրջանում, բանավեճ՝ մամուլում:

...Թումանյանի հետ կայացած առաջին հանդիպումներից հետո մեկնելով Արևմտյան Հայաստան՝ Ս. Գորոդեցկին առիթ էր ունեցել հենց այնտեղ ծանոթանալու նրա ստեղծագործությանը: Ծանոթացնողը Թումանյանի որդին էր՝ արդեն իսկ Վանում գտնվող Արտավազը: Գորոդեցկու հետ զբաղվելով որբահավաքման աշխատանքով՝ նա ազատ ժամերին նրան սովորեցնում էր հայերեն, նրա համար կարդում էր հոր ստեղծագործությունները և ռուսերեն վերապատմում դրանց բովանդակությունը: Գորոդեցկու ծանոթությունը Թումանյանի ստեղծագործությանն այնուհետև շարունակվում է Թիֆլիսում: Նա սկսում է թարգմանել Թումանյանի գործերից՝ «Համերգ», «Անդարձ ճամփորդներ», «Անիծած հարսը», «Վրաստանի բանաստեղծներին», «Փարվանա», ապա քառյակները, որոնք ռուս բանաստեղծի խոստովանությամբ Թումանյանը շատ հաճախ կարդացել ու թարգմանել է իր համար: «... քնքշորեն ուղղում էր ինձ, - գրում է նա, - վախենալով դիպչել ինքնասիրությանս», քանի որ՝ «Այն ժամանակ ես թարգմանել էի կարողանում, առանձնապես արևելյան նրբին ձևով»:

Խորին ակնածանքով ու անկեղծությամբ Գորոդեցկին մշտապես հավաստում էր, թե իր վրա Յովհ. Թումանյանն ազդել է իրենց «անձնական բարեկամության ամբողջ ուժով»: Իսկ 1947 թ. վերաբերող «Ձրույց Յովհաննես Թումանյանի հետ» բանաստեղծության մեջ նա ուղղակի ասում է.

... Լաց ու ծիծաղի այս քաղաքի մեջ,
Կանգնած կապտագորշ Քուռի ափերին,
Ես ամենից շատ նրան եմ սիրել
Այդ ջահել հոգով ծեր մարգարեին:

Ի դեպ, Թումանյանը 1918 թ. հունվարի 29-ին Գորոդեցկու կնոջը նվիրել է մի սրտառուչ բանաստեղծություն՝ «Տիկին Նիմֆա Գորոդեցկուն» վերնագրով, որը գրել է «Փարվանա» պոեմի ռուսերեն հրատարակության շափկի վրա:

... 1918 թ. մարտի սկզբին ամբողջանալով ձևավորվում և լույս է տեսնում Գորոդեցկու «Հայաստանի հրեշտակը» գրքույկը, որ Թումանյանին նվիրել է ահա այսպիսի մակագրությամբ. «Ձեզ եմ նվիրում, լուսավոր բարեկամ, այս գիրքը ոչ միայն այն պատճառով, որ մինչև սրտիս խորքը իմայված եմ Ձեր անձնավորությամբ, այլև այն պատճառով, որ Ձեր անունը գաղափար է, իմ հայրենիքի բարեկամությամբ հայոց հարության գեղեցիկ գաղափարը»:

Յովհիչ է և ֆորագացի վրայի նրա ընծայագիրը.



ՌՈՒՍԱԿԱՆ «ԱՐԾԱԹԵ ԴԱՐԻ» ՀԱՅԱԶԳԻ ՄՈՒՍԱՆ.

ԵԼԵՆԱ ԿՈՄԻՍԱՐՇԵՎՍԿԱՅԱ-ԲԱԼԻԵՎԱ

Ռուս մշակույթի պատմության մեջ հետք թողած հայազգի տիկնանց մեջ եղել է մեկը, որը թեև արվեստում չի հասել բարձունքների, սակայն միայն իր գոյությամբ ապահովել է բաղձալի ներկայությունը, դարձել ներշնչանք և անփոխարինելի ուղեկից: Խոսքը դերասանուհի և բալետային մենեջեր Ելենա Կոմիսարժևսկայա-Բալիևայի (1895-1981) մասին է, ծնյալ Յակոբյան, որը Եվրոպայում և Ամերիկայում հայտնի էր որպես Elene Komisarjevskaja կամ Mrs. Elene Balieff: Նա ամուսնացած է եղել երկու նշանավոր մշակութային գործիչների հետ, նրա դիմանկարը վրձնել են Սերգեյ Սուդեյկինը և Բորիս Շալյապինը, նրա համար բանաստեղծություններ է գրել և կարդացել Վլադիմիր Մայակովսկին, նրան անպատասխան և անհույս սիրով սիրահարված է եղել երգիչ Ալեքսանդր Վերտինսկին, նրա մտերիմներն են եղել դերասան-բեմադրիչ Ալեքսանդր Թաիրովը, դերասան Իգոր Իլյինսկին, նկարիչ Սատիսլավ Դոբոժինսկին... Նրա և ռուսական «Արծաթե դարի» բոհեմական արվեստագետների վերաբերյալ հյուսվել են առասպելներ, շրջել տարբեր պատմություններ...

Ելենան, կամ, ինչպես նրան մտերիմներն են անվանել, Լեյան, ծնվել էր Մոսկվայում, հայրը հայ էր (Արկադի Յակոբ-

յան), մայրը՝ ռուս (Նադեժդա Օրեշնիկովա): Ունեցել է երեք քույր (Նատալյա, Նինա, Սոֆյա) և մեկ եղբայր՝ Իվան: Ծնողները վաղ են ամուսնալուծվել, մայրը երկրորդ անգամ ամուսնացել է ճարտարագետ-մեխանիկ Լեոնիդ Ջվորիկինի հետ, որից ունեցել է Դմիտրի որդուն (հետագայում՝ հայտնի մարզիչ): Իր դերասանական գործունեությունը սկսել է ռուսական բեմի մեծամունդ դերասանուհի Վերա Կոմիսարժևսկայայի թատրոնում, որը ղեկավարել է արտիստուհու եղբայրը՝ բեմադրիչ, մանկավարժ, թատրոնի տեսաբան, նկարիչ և թարգմանիչ Ֆյոդոր Կոմիսարժևսկին (1882-1954): Վերջինս, լինելով կանանց մեծ երկրպագու, շատ շու-

տիկնայք Լալայանցը, Աբխազոմյանը, Դավիթյանը, Պայիմյանը, օրիորդ Սուսանդյանը, Ալեքսան և Նիկոլայ Յոկսեֆյանները, Ֆեոդոր Շալյապինի խմբի մենեջերուհի, մեցցո-սոպրանո Արփինե Արզումանյան (Արզումանյան, 1902-1976), Ալին Թամիրյանը, Լ. Տարասովը՝ ֆրանսիական գրականության ապագա խոշոր դեմք Անրի Տրուայան... Այս ամուսններին միացել է նաև կես հայ տիկին Բալիևան: Նրա մասնակցությամբ կադրեր առկա են 1923-ին Լի Դե Ֆորիսի նկարահանած «Չղջիկ» ֆիլմում, որտեղ ընդգրկվել է «Փայտե զինվորների շքերթը» ներկայացումը՝ Բալիևայի դերակատարմամբ:

1929-ին «Չղջիկը» երկրորդ անգամ է մեկնել հյուրախաղերի ԱՄՆ՝ հանդես գալով Նյու Յորքի «Ջոլտոնի 59-րդ փողոցի թատրոնում»: 1934-ից Ելենա Բալիևան սկսել է հանդես գալ բարեգործական ձեռնարկներով, օրինակ՝ մասնակցել է ռուս վարորդների փոխօգնության միության և այլ համերգների, հանդես է եկել նաև ռուս տարագիր բանաստեղծներ Դոմ-Ամինարոյի (Ամինոպոլ Շալյապինի) և Լույի (Լեոնիդ Մուշտեյն) երեկոներում...

1936-ին Նիկիտա Բալիևի հանկարծամահ լինելը Ելենա Արկադևնային գրեթե հասցրել է մահվան դուռը, ուստի նա

ընդմիջտ թողել է թատրոնը: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո եղել է Նյու Յորքի «Մետրոպոլիտեն օպերային» կից բալետի դպրոցի փոխտնօրենը: Բալիևան բնակվել է յոթ սենյականոց բնակարանում, որը եղել է ռուս և ամերիկացի արվեստագետների հավաքատեղի, այն անվանել են «Նյույորքյան Արբատ»: Նրա մտերիմ բարեկամներից է եղել ամերիկացի աշխարհահռչակ դաշնակահար Վան Զլիբերնը... 1960-ականներին Ելենա Բալիևան այցելել է Մոսկվա, հանդիպել հարազատներին: Նրան առաջարկել են մնալ ԽՍՀՄ-ում, սակայն նա մերժել է...

Կյանքի վերջին տարիները Ելենա Բալիևան անցկացրել է Մանհաթենի Նովո-Դիվեյան ուղղափառ վանքում: Մահացել է 87 տարեկանում 1981-ի մարտի 15-ին: Անգլիայում մնացած որդին՝ Վլադիմիր (Վադիմ) Կոմիսարժևսկին (որը որոշ ժամանակ անհաջող աշխատել է կինոյում և ողջ կյանքում հոր պես տարված է եղել կանանցով), մոր մահից հետո մեկնել է Նյու Յորք՝ նրա իրերը վերցնելու և շուտով ինքն էլ հետևել է մորը...

Ավելացնենք նաև, որ Ելենա Բալիևայի քույրերը մնացել են Ռուսաստանում և, ի տարբերություն իրենց ավագ քրոջ, ապրել են խիստ սովորական կյանքով: Նատալյա Յակոբյանը (1896-1967) եղել է գրական խմբագիր, աշխատել մոսկովյան հրատարակչություններում, Նինա Յակոբյանը (1902-1977) եղել է մեքենագործի, իսկ Սոֆյա Յակոբյան-Սավարին (1903-1983) վարչական աշխատող է եղել Մոսկվայի պետական համալսարանի հանրակացարանում...

Յ.Գ. - Ելենա Բալիևայի մասին համացանցային հոդվածներից մեկի հեղինակը (Ն. Մ. Ջվորիկին) հարկ է համարել նշել, որ «Ե. Ա. Ակոպիանին նվիրված տարբեր կենսագրական և հանրագիտարանային տեղեկատվություն... հին ռուսական Ակոպիան անունն աղավաղվում է և սովորաբար գրվում է հայկական ձևով, որպես Ակոպյան, ինչն, իհարկե, ճիշտ չէ»:

Իհարկե, անկախ այն բանից, արտիստուհու անունը գրվի Ակոպիան կամ Յակոբյան, Ելենա Բալիևան պատկանում է ռուսական մշակույթին, և վերոհիշյալ պնդումը կատարող հեղինակն իրականում ինքն է աղավաղում ճշմարտությունը՝ Ակոպիանը համարելով «հին ռուսական ազգանուն»...

Արծվի ԲԱԽՉԻՆՅԱՆ

«ՁԵՐ ԱՆՈՒՆԸ ԳԱՂԱՓԱՐ Է ...»

➤5 «Из горнила бедствий
Армении вынес я
Надежду на ее воскресение.
Благословен день, когда
Оно свершится.
Ованесу Туманяну

Сергей Городецкий 1918. III. 6.:
1918 թ. դեկտեմբերի 3-ին տեղեկանալով Արտավազդի և նրա ընկերների ողբերգական մահվան մասին՝ Գորոդեցկին ցավով գրում է Թումանյանին. «Հենց հիմա Վարդգեսը (Ահարոնյան – Ա. Ջ.) «Հորիզոնից» տխուր տողեր թարգմանեց մեր ընդհանուր բարեկամների, որոնց թվում և Ձեր նրբագեղ սևաթույր աղավնու – Արտիկի՝ մարտում զոհվելու մասին: Արցունքները պարուրում են աչքերս. ես նրան սիրում էի որպես արյունակից եղբոր, սակայն իմ վիշտը թվում է փոքրիկ մի մթնշաղ Ձեր վշտի ահռելի գիշերի հանդեպ:

Պիտի չկարողանամ մխիթարել Ձեզ, հերոսի հորը, սակայն այնքան մոտ եմ կանգնած Ձեր կողքին և Ձեզ հետ միասին մայում եմ դատարկված աշխարհին ու սպասում այն պահին, երբ Ձեզ հետ միասին մեր հայազգը կդարձնենք դեպի հավերժական աստղեր, որտեղ այժմ գտնվում է Արտիկի հոգին»:

...1919 թ. փետրվարից մարտ՝ ավելի

քան մեկ ամիս տևողությամբ, հայ գրական կյանքում տեղի է ունենում հիշարժան իրադարձություն. մեծ շուքով նշվում է Հովհ. Թումանյանի ծննդյան 50-ամյակը: Թիֆլիսի ողջ հասարակայնությունը՝ հայ, վրացի, ռուս, բուռն խանդավառությամբ ու սիրով տոնում են մեծ քաղաքացու հոբելյանը: Բազմապիսի մախաճեռություններով հոբելյանին իր մասնակցությունն է բերում նաև Ս. Գորոդեցկին՝ միաժամանակ ներկա գտնվելով այլևայլ կարգի բոլոր միջոցառումներին: «Ձակավազակոյե սլովո» թերթի փետրվարի 23-ի համարում գետեղված է նրա «Իմաստուն և հեզ» հոդվածը: «... այդ օրը (Թումանյանի ծննդյան օրը – Ա. Ջ.),- գրում էր Գորոդեցկին,- տոնն է բազում միլիոնների, և ոչ միայն հայերի, այլև բոլոր անդրկովկասցիների ... քանի որ Հովհաննես Թումանյանը իր ամբողջ երգով, իր ողջ գործով քարոզել է համամարդկային զաղափարների առաջնությունը ազգային հանդեպ:

Հասկանալ Հովհաննես Թումանյանին՝ նշանակում է հասկանալ Հայաստանը՝ խաղաղ երկրային կյանքի նրա վաղեմի գաղափարներով, բնության ու մարդկանց համագործակցության մեջ հովվերգական կյանքի նրա ձգտումով, հակառակ պատմության ողբերգական ընթացքի»:

Թումանյանի հոբելյանական օրերին ռուս բանաստեղծն արձանագրում է. «Հայկական տոնը տոնակատարություն դարձավ ամբողջ Անդրկովկասի համար:

...Հովհաննես Թումանյանը հասավ այն պահին, երբ ազգերի համերաշխության նրա քարոզը դարձավ օրվա նշանաբան»:

...Երկար տարիներ Գորոդեցկին աշխատել է Թումանյանի մասին ակնարկ-հուշ գրելու վրա: «Այն, ինչ գրում եմ Հովհաննես Թումանյանի մասին, դիսերտացիա չէ, հուշագրում չէ, այլ միայն լիրիկական դիմանկար, համարյա թե արձակ ու չափածո պոեմ, որի մեջ ամփոփում եմ և անձնական հիշողություններ, և նրա ստեղծագործության մասնակի վերլուծություն, և հատվածներ օրագրերից», – գրել է ռուս բանաստեղծը «Հովհաննես Թումանյան: Լիրիկական դիմանկար»-ում, որը հրատարակել է 1958 թ.:

... Հովհ. Թումանյանի մահվանից մեկ օր առաջ՝ 1923 թ. մարտի 22-ին, Գորոդեցկին այցելել է ծանր հիվանդ բանաստեղծին Մոսկվայի Օգուպ փողոցի վրա գտնվող հիվանդանոցում: Հանդիպումը ջերմ էր ու սրտառու: «Հովհաննես Թումանյան» վերնագրով մահափստականում նա գրում է. «Հ. Թումանյանի անունը հռչակված է ամեն տեղ, ուր հնչում է հայ

լեզուն: Հայկական բանաստեղծության համար նա արել է նույնը, ինչ որ Պուշկինը մեր գրականության համար: ... Հայ ժողովրդի պատմական ճակատագիրը տանջում էր նրան ամբողջ կյանքում: ... պատերազմի տարիներին կիսում էր գաղթականների վշտերն ու տառապանքները, գլխավորում հայերին օգնելու գործը: ... Հ. Թումանյանի երգերը դեռ երկար կապրեն հայ և միջազգային պոեզիայի մեջ»:

Թումանյանի թաղման օրը՝ 1923 թ. ապրիլի 15-ին, «Խորհրդային Հայաստան» թերթում տպագրված «Եղբայրության շաղափը» հոդվածում, բնութագրելով մարդ և քաղաքացի Թումանյանին, նրա «հոգեկան հմայքը», որով մեծ պոետը կապում էր իրար հետ ամեն ազգի ու ցեղի մարդկանց, Ե. Չարենցը մտաբերում է Գորոդեցկու կարծիքը: «Ես երբեք չեմ մոռանա, – գրում է նա, – ռուս պոետ Սերգեյ Գորոդեցկու խոսքերը Թումանյանի մասին՝ ասված Մոսկվայում, գրողների մի ինտիմ շրջանում:

«Թիֆլիսում լինել և չճանաչել Թումանյանին, նշանակում է Մոսկվա լինել, բայց և չտեսնել Իվան Մեծի զանգատունը»:

Անուշավան ԶԱՔՐԻՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, «Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր

ԳԵՆԵՐԱԿ ԴԱԶԱՐՅԱՆ

Խորհրդային Միության ապագա հերոսը ծնվել է 1904 թ. մայիսի 15-ին Շուշիում, աշխատավորի ընտանիքում: Հեղափոխությունից հետո մտավ բանակի շարքերը, մասնակցեց մարտական մի քանի գործողությունների: Հետո, ավարտելով Երևանի Ա. Մյասնիկյանի անվան ռազմական դպրոցը, ծառայության անցավ հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիայում, հասավ մինչև գնդի հրամանատարի պաշտոնի: Անդրանիկ Ղազարյանը շատ ակտիվ ու ժրաջան սպա էր: 1938-39 թթ. ղեկավարում է Երևանի պետական համալսարանի ռազմագիտության ամբիոնը: Հայրենական մեծ պատերազմի սկզբին Անդրանիկ Ղազարյանը նշանակվում է 988-րդ հրաձգային գնդի հրամանատար: Գունդը դժվարին մարտեր էր մղում Նովոմոսկովսկայա քաղաքի մոտակայքում: Հակառակորդը ուժեղ էր, նա ամենուր ճնշում էր խորհրդային զորքերին: Սակայն նահանջելով կարելի է լավ կռվել և հերոսություն ցուցաբերել: Շուտով փոխգնդապետ Անդրանիկ Ղազարյանին նշանակում են 134-րդ հրաձգային բրիգադի հրամանատար, իսկ քիչ անց՝ 74-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար: Դիվիզիան հատկապես աչքի է ընկնում Բրյանսկի ռազմաճակատի մարտերում: 1942 թ. գնդապետ Ղազարյանին ուղարկում են սովորելու Մ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիային կից հրամկազմի դասընթացներում: 1943 թ. փետրվարին դիվիզիայի հրամանատարին շնորհեցին գեներալ-մայորի կոչում, իսկ մի քանի ամիս անց գեներալ Ղազարյանի դիվիզիան հակառակորդի կրակի տակ առաջիններից է Կիևի հյուսիսում գետանցում Դնեպրը: Այս մարտերը շատ արյունալի էին, դիվիզիան փառքով կատարեց իր խնդիրը, գետի մյուս ափին տարածք գրավելով՝ այն կյանքի գնով պահեց՝ մյուս ստորաբաժանումներին հնարավորություն տալով հաս-



տատվել: Ահեղ մարտերում վիրավորվեց նաև դիվիզիայի հրամանատարը: Նույն թվականի հոկտեմբերի 16-ին գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանին շնորհվեց ԽՍՀՄ հերոսի կոչում, որը ստացավ հոսպիտալում: Ապաքինվելուց հետո Ղազարյանն ուրիշ դիվիզիայի հրամանատարի պաշտոնում մասնակցեց Բելոռուսիայի և Լիտվայի ազատագրմանը, Քյոնիգսբերգ քաղաք-ամրոցի գրավման դաժան մարտերին: Փառքով ավարտելով պատերազմը Եվրոպայում՝ գեներալ Ղազարյանն իր դիվիզիայի մարտիկների հետ տեղափոխվեց Արևելյան ճակատ, որտեղ մասնակցեց ճապոնական զորքերի ջախջախմանը: 215-րդ դիվիզիան ազատագրեց չինական Հոբեյա, Մուլինա, Դունհուա, Գիրինգա ավանները և այլ բնակավայրեր: Պատերազմից հետո գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը նշանակվել է հրամանատարական բարձր պաշտոնների, ստացել գեներալ-լեյտենանտի կոչում: 1955 թ.-ից անցել է թոշակի և մշտական բնակություն հաստատել Սիմֆերոպոլում, որտեղ էլ մահացել է 1992 թ. հունվարի 16-ին:

ԻՏԱԼԱՅԻ ՆԱԽԿԻՆ ԴԵՍՊԱՆԻ ՀԱՅԱՊԱՏՈՒՄԸ

Մայիսի 10-ին Տորինի գրքի միջազգային ցուցահանդեսում տեղի է ունեցել Բրունո Սկապինիի «Ախթամար» գործողությունը՝ գրքի ներկայացումը: Հատորը պատմում է Մեծ եղեռնից հետո հայ ազատագրական խմբերի իրականացրած վրեժխնդիր ծրագրի մասին, որը կոչվել է հին հայկական ավանդազրույցի անունով:

Գրքի հեղինակը՝ Բրունո Սկապինին, ծնվել է 1949 թ. Հռոմում: Ստանալով քաղաքագիտական կրթություն՝ 1975-ին սկսել է իր դիվանագիտական կարիերան, զբաղեցրել տարբեր պաշտոններ ինչպես արտերկրում, այնպես էլ Իտալիայում: 2009-2013 թթ. եղել է Հայաստանում Իտալիայի արտակարգ և լիազոր դեսպանը: Դիվանագիտական կարիերան թողել է 2014 թվականին, սակայն որպես իտալա-հայկական ընկերակցության պատվավոր նախագահ շարունակում է աշխատել Հայաստանի հետ, մասնավորապես առևտրի և արդյունաբերության ոլորտում:




ՊԱՐՍԻՅ ՇԱԷԻ ՆԱԽԿԻՆ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳԻՐԶԸ

Իրանի նախկին թագավոր Մուհամմադ Ռզա Շահի անձնական օպերատոր, այժմ գլենդեյլաբնակ Պետրոս (Փիթըր) Պալյանը ԱՄՆ-ում պարսկերենով հրատարակել է իր կյանքի հուշերը՝ որի վերնագրի առաջին մասն անգլերեն է՝ «Ես նկարահանեցի շահին» (խաղարկելով անգլերեն to shoot բայը, որ նշանակում է թե՛ նկարահանել, թե՛ սպանել), երկրորդ մասը՝ պարսկերեն՝ «Յոթ տարի Իրանի թագավորի հետ»: Գիրքը պարունակում է հեղինակի հուշերն ինչպես Իրանի թագավորական ընտանիքի, այնպես էլ միջազգային նշանավոր դեմքերի հետ, որպիսիք էին Անգլիայի Էլիզաբեթ թագուհին, Ֆրանսիայի նախագահ Շառլ դը Գոլը, ԱՄՆ նախագահ Ռուայթ Էյզենհաուերը...

Պետրոս Պալյանը ծնվել է 1931-ին Թեհրանում, հայրը երևանցի երաժիշտ Ռուբեն Պալյանն էր: Ուսանել է պարսկական դպրոցում, այնուհետև մասնագիտացել է կինոարվեստի մեջ Սիրաքյուզի համալսարանում (ԱՄՆ): 1950-ականներից որպես օպերատոր մասնակցել է մի շարք իրանական ֆիլմերի նկարահանումներին, 1962-ին Բեռլինի միջազգային կինոփառատոնում արժանացել է մրցանակի իր օպերատորական աշխատանքի համար: 1958-ից մինչև 1965 թվականը Պետրոս Պալյանը եղել է Մուհամմադ Ռզա Փաիլավի շահի անձնական օպերատորը: Այս աշխատանքի շնորհիվ Պալյանը շահի հետ շրջագայել է աշխարհով մեկ (Պակիստան, Աֆղանստան, Հնդկաստան, Ավստրիա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, ԽՍՀՄ): Նա լուսանկարել է նաև ԱՄՆ-ի նախագահ Ջոնսոնին, Եթովպիայի թագավոր Հայլե Սելասիեն, Իրաքի թագավոր Մալեք Ֆայսալին, Յուրի Գագարինին, Մայա Ղլինեցկայային և այլոց: 1972-ին «Սպահանգին Նյու Յորքում» («Արկած՝ պարսկական ոճով») իրանա-ամերիկյան ֆիլմի իր աշխատանքի համար արժանացել է իրանական ակադեմիայի «Սեփաս» մրցանակին (պարսկական «Օսքարին»): 1978-ին իրանական հեղափոխության պատճառով ստիպված է եղել թողնել Իրանը: ԱՄՆ-ում Պետրոս Պալյանը որպես օպերատոր մասնակցել է հիմնականում փոքր բյուջե ունեցող անկախ ֆիլմերի: 2009 և 2011 թթ. այցելել է Հայաստան:

Ա. Բ.



Ծովային հսկան



Մեր մոլորակի պատմության էջերը թերթելիս հանդիպում ենք մի այնպիսի դարաշրջանի, երբ կենդանիները հանդես են եկել հսկա սողունների ձևով: Այդ շրջանում սողունների մեջ իր մեծությամբ և հատկապես երկարությամբ հայտնի է եղել հրեշավոր մողես դիպլոդոկը: Նա ապրել է ոչ խորը լճերում և ճահիճներում, սնվել է հյութալի բույսերով: Նա ունեցել է 40-50 տոննա քաշ և 25 մետր երկարություն, որից 17-ը եղել են միայն պարանոցն ու պոչը: Հսկա խոտակերի ոտքերը եղել են հաստ և կարծ, իսկ գլուխը՝ փոքրիկ:

Այդ հսկա սողունների գոյության դարաշրջանից միլիոնավոր տարիներ հետո (89 մլն տարի) մենք հանդիպում ենք մի այնպիսի հսկայի, որի մարմնի երկարությունը ոչ թե 20-25, այլ 33 մ է, իսկ քաշը 40-ի փոխարեն 150 տ, դա կապույտ կետն է: Նա մեծ մասամբ տարածված է հարավային կիսագնդի ջրերում, երբեմն էլ հանդես է գալիս մեր կիսագնդի հյուսիսային շրջաններում:

Կենդանու երկարությունը 33 մ է: Կողք կողքի առնվազն 175 մարդ պետք է կանգնած լինի, որպեսզի շրջապատի այդ

հսկա կենդանուն: Մեզանից յուրաքանչյուրն այդպիսի հսկայի մոտ կերևա այնչափ, որչափ մեզ մոտ կերևա փոքրիկ ճնճղուկը: Կապույտ կետը կշռում է 150.000 կգ, այսինքն՝ այնքան, որքան կկշռի միջին քաշի 2700 մարդ միասին կամ 40 փիղ: Կապույտ կետի բերանի մեջ կարող են երկու տասնյակից ավելի մարդիկ ազատ մտնել և մույմիսկ իրար չդիպել, բայց նա մարդուն կուլ տալ չի կարող: Հակառակ իր ահռելի մարմնին ու հսկայական բերանին՝ նա ունի փոքր կլան և մեղ կերակրափող, որից ներս են սահում միայն փոքրիկ փափկամարմինները, իսկ այդ գործին օժանդակում է նրա 3000 կիլոգրամանոց լեզուն: Նրա մեջքին կա մեկ ոչ մեծ լողակ, իսկ փորի վրա՝ 88 ծալքեր: Բերանի միջի թիթեղները (բեղերը) սև են, ծոպերը՝ կոշտ և նմանվում են ծիու մազին: Թիթեղների թիվը բերանի յուրաքանչյուր կողմում հասնում է 360-ի, որոնք ունեն մինչև 90 սմ երկարություն: Կապույտ կետի համեմատաբար մանր աչքերը գտնվում են բերանի անկյունային մասում:

Կապույտ կետը երբեք ձկներով չի սնվում: Օվկիանոսի ջրերում շատ կան խեցգետիններ ու փափկամարմիններ, որոնք էլ նրա սիրելի կերն են: Կապույտ կետը մեկ օրում կուլ է տալիս 1,5-2 տ մանր խեցգետնակերպեր, ծագ ունենա-

լու դեպքում՝ մույմիսկ 4-5 տ: Այդքան կերը, անցնելով նրա մեղ կերակրափողով, լցվում է 3000 և ավելի քան եռաքաթին ստամոքսը, որի երկարությունը հասնում է 3 մ-ի: Ստամոքսից կերն անցնում է 240 մ երկարություն ունեցող աղիների մեջ: Սննդի մարսելուն նպաստում է 1000 կիլոգրամանոց ենթաստամոքսային գեղձի ծորաններից հոսող հյութը:

Կապույտ կետն ունի 8000 և ավելի: Արյան այդ հսկայական քանակը շրջանառության մեջ է դնում 700 կիլոգրամանոց սիրտը:

Ընդհանրապես բոլոր կետերը բազմաճյուղ են բաց ջրերում և տարվա այն ամիսներին, երբ հյուսիսային կամ հարավային կիսագնդում լինում է ձմեռ: Նրանք շարժվում են դեպի հասարակած՝ հավերժական տաքության շրջանը:

Ծնվելուց հետո մայր կապույտ կետն իր «փոքրիկին» 7 ամիս սնում է կաթով: Պատկերացրեք, ինչքան կաթ պետք է ունենա մայրն իր կաթնագեղձերում, որպեսզի 6-8 մետրանոց և 3 տոննա քաշ ունեցող ծագին բավարարի: Հաշվված է, որ կապույտ կետի կաթնագեղձերն օրական արտադրում են 300 և կաթ, որի յուղայնությունը կազմում է 40 տոկոս, այն դեպքում, երբ կովի կաթի յուղայնությունը լավագույն դեպքում հասնում է 5 տոկոսի:

ՆԿԱՐՈՒՄ ԵՆ ԵՐԵՒԱՆԵՐԸ

Երեխաների պաշտպանության միջազգային օրվա՝ հունիսի 1-ի կապակցությամբ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի միացյալ արհկոմը համակարգի աշխատողների երեխաների համար կազմակերպել էր «Նկարում են երեխաները ասֆալտի վրա» միջոցառումը: Միջոցառմանը մասնակցում էին մինչև 10 տարեկան 100 երեխա: Միջոցառումը անցկացվեց ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի կանաչապատ տարածքում, որը սիրով մեզ հատկացրել էր ինստիտուտի տնօրինությունը:

Ասֆալտի վրա նկարելուց բացի երեխաները մեծ բավականություն ստացան ինստիտուտի բացատներից մեկում երեխաների համար ստեղծված հրապարակում կառուցված ճոճանակներից, կարուսելից և այլ պարագաներից: Միջոցառման ընթացքում երեխաները հյուրասիրվեցին բնական հյութերով և մրգերով:

Միացյալ արհկոմը իր շնորհակալությունն է հայտնում ակադեմիայի ղեկավարությանը, բուսաբանության ինստիտուտի և Բյուրականի աստղադիտարանի տնօրինություններին՝ միջոցառմանը աջակցելու համար:


Կինա ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՀՀ ԳԱԱ միացյալ արհկոմի նախագահ

ԵՐԵՎԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՆ ՈՒՆԵՑԱՎ ԻՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Երևանի էներգետիկայի պատմության ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի մեր երկրի տնտեսության հետագա զարգացման համար:

Էներգետիկայի բնագավառի ճանաչված գիտնական, հայկական էներգետիկական ակադեմիայի հիմնադիր-նախագահ, հրապարակախոս, տեխնիկական գիտությունների թեկնածու Ստեփան ՊԱՊԻԿՅԱՆԻ գիտական մենագրությունը՝ «Երևան քաղաքի էներգետիկայի պատմությունը» վերնագրով, ավանդադրվել է: Գրախոսականում կարդում ենք, որ աշխատանքն իր բնույթով եզակի է և համրագիտարանային բնույթ ունի: Մենագրությունը մշտական պահպանության է հանձնված Հայաստանի ազգային արխիվում, ինչպես նաև Հայաստանի պատմության թանգարանում:

Այն ունի առաջաբան, որտեղ համառոտակի տրվում են Երևանին առնչվող կարևոր հարցերը: Երևանի ջրաղացներն իրենց ուրույն տեղն են գտել աշխատանքի սկզբնամասում:



Ջրաղացներ Երևանում, 1921թ.

Երևան քաղաքի էներգետիկան ծնվեց դժվարին պայմաններում, անցավ մեծ ճանապարհ և ունեցավ հսկայական դժվարություններ: Երևան քաղաքի էներգետիկայի ծնունդը համարվում է 1907 թվականը, երբ շահագործման հանձնվեց «Ամպեր» ընկերության հիդրոէլեկտրակայանը:

Այս աշխատանքում առաջին փորձն է արվում ամբողջառաջադրությամբ Երևան քաղաքի էներգետիկայի ավելի քան մեկդարյա պատմությանը և տալու նրա զարգացման հնարավոր ուղիները:

Երևանի էներգետիկայի վիճակը վատացավ հատկապես շուկայական տնտեսավարության անցման պայմաններում, որը ժողովրդի հիշողության մեջ մտավ որպես «ցրտի և մթի տարիներ»:



Երևանի «Ամպեր» ընկերության հիդրոէլեկտրակայան, 1907թ.

Հեղինակը գրում է. «Ամիրաթեշտ է կատարել լուրջ հետևություններ. որքանով ենք պատրաստ դիմակայելու ցանկացած փորձության՝ տարերային աղետներ, պատերազմական իրավիճակ, ունեցություններ և այլ չնախատեսված դեպքեր: Անկեղծ ասած, մենք պատրաստ չէինք մնան մարտահրավերների: Հակառակ դեպքում իրավիճակը բոլորովին այլ կլիներ, այսինքն՝ ավելի բարենպաստ երկրի և ժողովրդի համար»:

Երևան քաղաքի էներգետիկայի ոլորտում հիմնականում աշխատել են մեր հանրապետության բուհերը և տեխնիկումներն ավարտած մասնագետները:

Այսօր իրավիճակը փոխվել է, բայց զգոնությունը թուլացնելու իրավունք չունենք: Ճիշտ է, վերջին տարիների ընթացքում հնարավոր եղավ շահագործման հանձնել երկու մոտ էներգաբլոկ՝ Երևանի ԶԷԿ-ում և Հրազդանի 5-րդ բլոկը:

Սակայն դրանով վիճակը դեռևս գոհացուցիչ համարել չենք կարող, որովհետև գոյություն ունեցող էներգետիկական սարքավորումները բարոյապես և ֆիզիկապես մաշված են:

Այս աշխատությունն առաջին փորձն է ներկայացնելու Երևան քաղաքի էներգետիկական տարբեր տարիներին: Այստեղ տեղ է գտել նաև որոշ տեղեկատվություն Սևանա լճի վերաբերյալ, քանի որ Երևանում գտնվող երեք հիդրոէլեկտրակայան՝ Քանաքեռի, Երևանի երկու հեկերը սնվում են Սևան-Հրազդան կասկադից: Տեղ է գտել նաև Երևանի փողոցների լուսավորության խնդիրը:

Կարծում ենք՝ կարևոր, գիտական մեծ արժեք ներկայացնող Ստեփան Պապիկյանի «Երևան քաղաքի էներգետիկայի պատմությունը» մենագրությունը անհրաժեշտ է տպագրել առանձին գրքով: Այն լավ մեկը կլինի Երևանցիների, ինչպես նաև քաղաքի հյուրերի համար տոնական այս օրերին:

Samsung Electronics-ը հետազոտություններ է սկսել 6G-ի բնագավառում

Samsung Electronics կորպորացիան Սեուլի իր գիտական կենտրոնում ձեռնամուխ է եղել վեցերորդ սերնդի տեխնոլոգիաների (6G) բնագավառի ուսումնասիրություններին:

«Մենք ընդլայնել ենք մեր մասնագետների թիվը, որոնք զբաղվում են հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ստանդարտների մշակմամբ: Նրանք ձեռնամուխ են եղել 6G-ի բնագավառի հետազոտություններին», -ասել է կորպորացիայի ներկայացուցիչը, որի խոսքը մեջբերում է Yonhap-ը: Գործակալությունը նշում է, որ Samsung Electronics-ի հետազոտական խումբը 6G տեխնոլոգիաներին զուգահեռ արհեստական ինտելեկտի և ռոբոտների ստեղծման աշխատանքներ է իրականացնելու: Ապրիլի 4-ին Կորեայի Հանրապետությունը դարձել է առաջին երկիրը, որն սկսել է հինգերորդ սերնդի շարժական կապի առևտրային շահագործումը: Տվյալների փոխանցման դրա ռեկորդային արագությունը հաս-



նում է վայրկյանում 25 գիգաբայթի: Այս ցուցանիշները թույլ են տալիս առցանց ռեժիմով տեսաընկերներ հեռարձակել 8K (Ultra HD) լուծաչափով: Ինչպես սպասվում է, 6G ստանդարտը հինգերորդ սերնդի կապին փոխարինելու կգա 2025 թվականից ոչ շուտ, հաղորդել է SUUU-ը:

Ստեղծվել է աշխարհում առաջին ճկվող համակարգիչը

Lenovo ընկերությունը ներկայացրել է ճկվող էկրանով նոութբուք: Ընկերությունում նշում են, որ դա դեռևս նախատիպն է, և որ լիարժեք ռելիզը կկայանա 2020 թվականին:



Սարքն ունի 13,3-դյույմանոց ծալովի էկրան՝ 2K լուծաչափով և կողմերի 4:3 հարաբերակցությամբ: Ընկերության ներկայացուցչի խոսքով նոութբուքի քաշը չի գերազանցում մեկ կիլոգրամը, սակայն ավելի ստույգ տվյալներ իմանալ չի հաջողվել: Նաև ընկերությունը չի հրապարակել նոութբուքի տեխնիկական բնութագրերը: Միայն հայտնի է, որ սարքն աշխատում է լիարժեք Windows 10-ի կառավարմամբ և ունի Intel-ի պրոցեսոր:

Ռիո դե Ժանեյրոյի հայ ճարտարապետը

Միհրան Լատիֆյանը Ռիո դե Ժանեյրոյի ճարտարապետության և ներկայիս քաղաքաշինական տեսքի գլխավոր պատասխանատուներից է: Միհրան Լատիֆյանը, որն առավել հայտնի է Միհրան Լատիֆ անվամբ, Բրազիլիայում հաստատվել է 1879 թ.: Լատիֆյանն առաջին հայերից է, որ ուրբ է դրել բրազիլական հողին: Ճարտարապետը ծնվել է 1856 թ. Կոստանդնուպոլսում (այժմ՝ Ստամբուլ) հայ ճարտարապետների ընտանիքում: Կրթությունը ստացել է Բելգիայում՝ Կանտի համալսարանում, այնուհետև տեղափոխվել Բրազիլիա: 1897 թ. Ռիո դե Ժանեյրոյի քաղաքային իշխանությունները հայտարարություն տարածեցին Ռիոն միասնական քաղաքային համալիր դարձնելու մասին: Ռիո քաղաքի ճարտարապետության ամբողջական, միասնական մախագիծ ստեղծելու մրցույթ հայտարարվեց: Ճարտարապետ Լատիֆի մախագիծը հաղթող ճանաչվեց: Հենց ինքն էլ գլխավորեց իր մտահղացման իրականացման աշխատանքները:



Լատիֆի մախագիծի համաձայն՝ ապագա Ռիոն տարածք է՝ օղակաձև շրջապատված բեռնատար մեքենաների համար մախատեսված մայրուղիներով: Բլուրների վրա տեղակայված մասերն իրար էին կապվում կամուրջների ու բազմահարկ էստակադաների միջոցով, որոնք միավորվում էին թունելների և գետնամցումների հետ: Ընդամենը 1 տարվա ընթացքում կառուցվեց 70 մետր լայնությամբ Պեյր Մար մայրուղին: Սրանով Լատիֆյանը Բրազիլիայում հիմնեց ժամանակակից քաղաքաշինության դասական օրինակը՝ հաշվի առնելով բոլոր յուրահատկությունները, այդ թվում՝ ազգային:

Միհրան ԼԱՏԻՖՅԱՆ

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղդասյան 24բ, հեռ. 56-80-14, 077 31 63 76

Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 24.06.2019 թ.:

"ГИТУТЮН" ("Наука") газета НАН РА